Գարեգին Լևոնյան

891.99U
Ա-20

2011-07
Ա 379

ԿԱՐՄԻՐ ԳԼԽԱՐԿ

ՄԸՆԿԱԿԱՆ ՆԵՐԿԵՑՈՒՅՑԻՆ 4 ԳՈՐԾ.

Փոխադր. ՅԱԿՈԲ ՓԱՇՈՍԵԱՆԻ

ԹԻՖԼԻՍ
Տպարան «ՀԱՅՐԻՆՔ», Փարաճակայա № 6.
1913

891.99Ա
Ա 20

39678-63

891.995 Գրականություն
Կ-19 Կարմիր գլխարկ

Մշ-	469	16/III 81	

Հ Հ Ա Ր Մ.
3-3525ա
891.995
Ք-20

3-3525ա

Ինվ. № 21709

ԿԱՐՄԻՐ ԳԼԽԱՐԿ

ՄԵՆԿԵԿՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ 4 ԳՈՐԾ.

Փոխադր. ՅԱԿՈԲ ՓԱՆՈՍԵԱՆԻ

ԹԻՓԼԻՍ
Տպարան «ՀԵՐՄԻՆ», Գրաճնկայա № 6.
1913

27 JUL 2013

13474

39678-63

ԳՈՐԾՈՂ ԸՆԶԻՆՔ

Կարմիր գլխարկ

Մայր

Տատիկ

Որսորդ

Գայլ

I ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

ԿԱՐՄԻՐ ԳԼԽԱՐԿԻ ՄՕՐ ՍԵՆԵԱԿԸ. Հասարակ կահ-կարասիքով զարդարուած՝ սեղան, 2 աթոռ, դարակ (Этажерка) որի վերայ դարսուած են գրքեր շարքով. հացի պահարան։ Եթէ չկան դեկօրացիաներ, բեմը յարմարեցնել մի սենեակի, սովորական միջակ կահ-կարասիքով, միմիայն մի կողմից հարկաւոր է թողնել մուտքի ճանապարհ.

II ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

ԱՆՏԱՌ. Աթոռների վրայ դարսել տնային բոյսեր զանազան ծաղկամաններով, այնքան խիտ, որ մէկը միւսին ծածկի։ Իսկ եթէ այդ չի գտնուի, կարելի է վերցնել զանազան գոյների թղթեր եւ դրանից պատրաստել ծաղիկներ, վարդեր, մանուշակներ եւ այլն. այդ ծաղիկների շուրջը կանաչ խոտերի դիրք է տալու, որպէսզի հեռից բնական թւի։

III ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

ՏԱՏԻԿԻ ՄԻԱԿ ՍԵՆԵԱԿԸ. Միեւնոյն դեկօրացիանէ, ինչ որ առաջին գործողութիւնը. միմիայն հացի պահարանը եւ գրքերի դարակը պիտի տեղափոխել, աւելացնել նաեւ մի նստարան, վարագուրով ծածկել առաջը, ինչպէս սովորական մահճակալ։ Այս մահճակալը այնպէս պիտի տեղաւորեցնել, որպէս զի պարկած տատիկին, բոլոր հանդիսականները կարողանան նկատել, եւ երբ գայլը տատիկին գլորում է, պիտի վայր ընկնի մահճակալի յետեւում, գտնուած բարձի վրայ։

IV ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

ԿԱՐՄԻՐ ԳԼԽԱՐԿԻ ՄՕՐ ՍԵՆԵԱԿԸ Դեկօրացիան 1 գործողութեան սենեակը։ Թէպէտ կարելի է պատրաստել եւ ուրիշ սենեակ։

ԶԳԵՍՏՆԵՐ

ԿԱՐՄԻՐ ԳԼԽԱՐԿԸ Կարճլիկ շրջազգեստ. սպիտակ բարակ գուլպաներ, նոյնպէս սպիտակ կօշիկներ։ Դարակի կողքին, կախւած է կարմիր ուսնոց (прелинка) կարմրագոյն գլխարկով, որով միշտ գլուխն է ծածկում ու ժապաւէնն էլ բերում դէպի առաջ խաչկապում։ (Ուսնոցը նոյնպէս կարմիր է, ինչպէս եւ գլխարկը. երկուսն էլ միեւնոյն կտորից)։

ՄԱՅՐԸ Հագած է չթից շրջազգեստ. սպիտակ գոգնոց որի շարունակութիւնը դէպի վերեւ կապւած խաչմերուկ։ Գլխին էլ դրած է գլխադիր (чепецъ)

ՏԱՏԻԿԸ Ունի չթից շրջազգեստ, սպիտակ գլխադիր մեծ մեծ սրբորներով, աչքերին էլ ակնոցներ, դէպի ականջ տարած.

ՈՐՍՈՐԴԸ Սպիտակ վերնազգեստ, բլուզ. անդրավարտիկը հագցրած է երկարաճիտ կօշիկների մէջ. գլխին ռուսական գըլխարկ կարտուզով։

ԳԱՅԼԸ Միշտ պէտք է ման գայ չորս ոտների վերայ, հազւագիւտ դէպքում միայն կանգնում է յետին թաթերի վերայ։ Ամբողջ մարմինը պատած է սեւ մորթով։ Փորի տակից հարկաւոր է կապել մի որեւէ բան, որ գայլի տեսք տայ. յետեւից շինւած է երկար պոչ փնջաձեւ։ Գլխի վրայ ունի շինւած դիմակ, որ երկու կողմից ցցւած են երկու սրածայր ականջներ։ Եթէ հնարաւոր չէ գտնել գայլի դիմակ, կարելի է պատրաստել հետեւեալ ձեւով՝ կտրել մոխրագոյն մահուդից մի կտոր գայլի գլխի չափ, մէջ տեղը թողնելով բերանի տեղ։ Բամբակից շինել երկու աչքերի տեղ, մէջ տեղը անցկացնելով մի կարմիր գիծ, որպէս զի սարսափի դիրք ստանայ։ Այնուհետեւ, կարել 2 հատ եռանկիւնաձեւ կտորներ, միեւնոյն մահուդից եւ կպցնել գլխի երկու կողմերում նման երկու ականջների։ Բերնի մէջ կարել կարմրագոյն շոր՝ լեզուի փոխարէն։ Վերին եւ ներքին ծնոտների մէջ անցկացնել փոքրիկ փայտիկներ՝ ատամների փոխարէն։ Լեզուն ատամների միջով կախ ընկած պէտք է լինի եւ թեքւած դէպի մի կողմ։ Երբ գայլը յարձակւում է մէկի վերայ, նախ քան յարձակւելը պէտք է որ նա յետ դառնայ մի կողմ, փայտեայ ատամները անցկացնի ծնոտների մէջ, որպէս զի բերանը իբր թէ բաց երեւայ։

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Բեմը ներկայացնում է կարմիր գլխարկի մօր սենեակը։

(Մայրը պահարանից դուրս է բերում մի ափսէ մէջը կարկանդակ և մի փոքրիկ ման, փաթաթւած թղթով, ու մի շիշ էլ գինի։ Այս բոլորը դնում է սեղանի վրայ, յետոյ իջեցնում է ծըղնոտեայ զամբիւղը, որի մէջն է լցնում այս բոլորը և փաթաթում է մաքուր սպիտակ շորով։ Այս բոլորը կատարում է նա շատ հանգիստ, առանց շտապելու, աշխատելով որքան հնարաւոր է դեղեցիկ շարել։ Այս միջոցին կարմիր գլխարկը նստած է երեսը դէպի հանդիսականները և գուլպայ է գործում)։

ՄԱՅՐԸ (բոլորը դարսելուց յետոյ)

Այստեղ եկ, Աղունիկս։

ԿԱՐՄԻՐ ԳԼԽԱՐԿ (թռչկոտելով մօտենում է մօրը)

Ի՞նչ էք կամենում, սիրելի մայրիկ։

ՄԱՅՐԸ

Ահա տես սիրելիս՝ ես զամբիւղում դրել եմ կարկանդակ, մի ման կարագ

և մի շիշ էլ գինի։ Այս բոլորը դու կըտանես և կըհնաձնես տատիկին։ Տատիկը շատ տկար է և պարկած է անկողնում։ Կյանձնես տատիկին և կասես որ կարկանդակը կարագով ուտի ու գինին էլ անպատճառ խմի։ Դա իրեն կարող է մի քիչ ուժ տալ, առանց այն էլ խեղճը քանի գնում, ծերութիւնից մաշւում է։

ԿԱՐՄԻՐ ԳԼԽԱՐԿ

Ուրեմն այդպէս սիրելի մայրիկ. բոլորը յանձնեմ տատիկին։

ՄԱՅՐԸ

Այո՛ իմ անուշիկս։ Ես ինքս գնալ բոլորովին անկարող եմ, հարկաւոր է, որ գործ չինեմ տանը։ Դու ինքդ իմ փոխարէն կը համբուրես նրա ձեռները և կհարցնես նրա առողջութեան մասին ու կասես իմ կողմից, երբ որ ես ժամանակ ունենամ կըգամ նրան տեսնելու, իսկ այժմ ուղարկում եմ քեզ հետ այս փոքրիկ ընծան։

ԿԱՐՄԻՐ ԳԼԽԱՐԿ

Օ՛ և ինչպէս ուրախ կը լինի տատիկը։ Մայրիկ ջան կարելի է, որ քիչ մնամ տատիկի մօտ և գրոյց անեմ։

ՄԱՅՐԸ

Նստիր սիրունիկս, և պատմիր նրան լաւ լաւ բաներ, և յետոյ աշխատիր միշտ բարձր խօսել, որովհետև տատիկը վատ է լսում. Նրա հետ քաղցրալիր վարուիր։

ԿԱՐՄԻՐ ԳԼԽԱՐԿ

Ես նրան կըգրկեմ և կըհամբուրեմ, յետոյ կը յանձնեմ քո տուած ընծան ու կընստեմ նստարանի վրայ նրա մահճակալի մօտ։

ՄԱՅՐԸ (իջեցնելով մեխից կարմիր ուսնոցը)

Մօտեցիր ինձ, ես ծածկեմ քո կարմիր գլխարկը (ծածկում է) ահա այսպէս (կապում է ժապաւէնը խաչմերուկ և ուղղում ուսնոցը)

Ես շատ եմ սիրում քեզ տեսնել կարմիր

գլխարկով, որքան աշխատանք եմ գործ դրել այդ գլխարկի վերայ։

ԿԱՐՄԻՐ ԳԼԽԱՐԿ

Ոչ ոք էլ այսպիսի գեղեցիկ և կարմիր գլխարկ չունի ինչպէս ես, դրա համար էլ բոլոր մեր հարևանները ինձ անուանում են Կարմիր գլխարկ.

ՄԱՅՐԸ (նորից ուղղելով նրա ուսնոցն ու գլխարկը)

Վազելով գնա անուշիկս, զգուշացիր, յանկարծ չրսայտակես և վայր ընկնես, կարող ես շիշը կոտրել, թափել գինին, փշացնել ամանն ու կարագը։

ԿԱՐՄԻՐ ԳԼԽԱՐԿ

Մի վախենաք մայրիկ ջան, բոլորը ես կը հասցնեմ նրան։

ՄԱՅՐԸ

Նայիր, չկանգնես անտառում, անդադար շարունակիր ճանապարհդ։ Տեղ տեղ, չկանգնես, ծառերից պտուղներ և ծաղիկներ քաղելու, թիթեռների յետևից չը

ընկնես ու ոչ ոքի հետ էլ չխօսես։ Մի՞թէ քիչ չար մարդիկ կան աշխարհիս երեսին։ Զգուշացիր սիրելիս ամեն մի բանից և յիշիր՝ երբ մտնես տատիկի մօտ, այնուհետև կը զարթեցնես նրան, իսկ խեղճ տատիկը միայնակ պարկած կը լինի իր խրճիթում։

ԿԱՐՄԻՐ ԳԼԽԱՐԿ

Օ՜ ես մի վայրկեանում կը վազեմ նրա մօտ։ Տատիկը ապրում է շատ մօտիկ, բաւական է անցնես անտառը մի մեծ եղէգնի ծառ կայ կանգնած։ Ահա այդ ծառի մօտն է գտնւում նաև տատիկի տնակը։

ՄԱՅՐԸ

Դէհ Ասաուած քեզ հետ որդեակս։ Համբուրիր ինձ, չը մոռանաս կատարելու իմ տուած պատուէրները։

ԿԱՐՄԻՐ ԳԼԽԱՐԿ (մօտենում է մօրը գրկում և մի քանի անգամ համբուրում է)

Հանկստացէք մայրիկս միամիտ եղէք, չեմ մոռանայ (վազում է դուրս)

ՄԱՅՐԸ (Երեխային հեռևելով)

Վախենում եմ ես նրանից, քանի որ նա շատ անդարդ ու անհանգիստ է։ Կարող է ուրիշին ականջ կախել և բոլորովին մոռանալ ասածներս։ Նրան բոլորն էր սիրում են ու յարգում, քանի որ նա մի քիչ չարաճճին է։ Արդէն ժամանակ է գործի նստելու (սկսում է կարել իր գգեստը)

ՎԵՐԱԴՈՅՐ

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Անտառ. մեծ մասամբ կանաչ, արհեստական ծաղիկներ աջ կողմից։

ԿԱՐՄԻՐ ԳԼԽԱՐԿ *(Դուրս է գալիս բեմի ձախ կողմից երգելով կիսաձայն).*

«Մի կարիր ինձ մայրիկ կարմիր բաճկոնակ»

(Այս վերջին բառի վերայ մօտենում է Թփին, որտեղ ծաղիկներ շատ կան, կանգ է առնում, դադարում է երգել և կռանում է ծաղիկների վերայ)

Որքան գեղեցիկ ծաղիկներ են և ինչքան անուշ հոտ է բուրում։

(Զոքում և հոտ է քաշում, այդ ժամանակ գայլը դուրս է պրծնում Թփի տակից. բերանը լայն բաց արած և ուզում է յարձակուել կարմիր գլխարկի վերայ. Յանկարծ հեռուից լսում է կացինների ամուր ձայնը—մէկն ու մէկը բեմի յետևից մուրճով խփում է տախտակին-գայլը կանգ է առնում, փակում է բերանը և խօսում է առնական ձայնով)։

Բարև քեզ կարմիր գլխարկ։

ԿԱՐՄԻՐ ԳԼԽԱՐԿ (Սաստիկ վախեցած նստում է գետնին)։

Ա՜հ գայլը...

ԳԱՅԼ

Ինչից ես վախենում գառնուկըս, ես քեզ ձեռք չեմ տայ, բոլոր գայլերն էլ խօմ շար չեն։ Գնանք միասին անտառ մի քիչ զբօսնենք և ես քեզ կը ցոյց տամ թէ որտեղ է գտնուում իմ մորենին։

ԿԱՐՄԻՐ ԳԼԽԱՐԿ

Շատ շնորհակալ եմ քեզանից գայլ։ Ես բոլորովին ժամանակ չունեմ. ես շտապում եմ տատիկիս մօտ։ Ես նրան պիտի տանեմ կարկանդակ, մի ման կարագ և մի չիշ էլ գինի։ Իմ տատիկը բաւականին ծերացել է. հարկաւոր է, որ նա ուտի կարկանդակ կարագով և խմի գինի, որպէսզի ուժերը մի քիչ կազդուրի (ուզում է վեր կենալ)։

ԳԱՅԼ

Մի շտապիր, կարող ես յանկարծ վայր գցել շշով գինին և կոտրել։

ԿԱՐՄԻՐ ԳԼԽԱՐԿ

Հապա մի տեսնեմ խօմ չի կոտրուել (Զոքում է. միջից հանում շիշը և տնտղում)։

ԳԱՅԼ (Կիսաձայն ժողովրդին)

Լաւ նախաճաշ կունենայի ես այսօր, եթէ այս անպիտան անտառապահները ճաշը լինէին։ Սրանք էլ նոր վճռեցին ծառերը կոտրտել։ Անդադար լսում է՝ թախկ, թախկ ու թախկ.

(Աչքի տակով նայում Կարմիր գլխարկին)։

Համա թէ կուտէի հա՜, ինչքան թխլիկն է, երևում է որ միսը համով կը լինի և ոսկորներն էլ փխրուն։ Բայց հէնց որ գոռայ իսկոյն անտառապահները վրայ կը վազեն ու իմ բանը բուրդ կը լինի. անպատճառ կը սպանեն։ Հարկաւոր է միայն խորամանկութիւն բանեցնել

(Բարձրաձայն դէպի Կարմիր գլխարկը)։

Քո տատիկը շա՞տ հեռու է ապրում։

ԿԱՐՄԻՐ ԳԼԽԱՐԿ (Վեր բարձրացնելով գլուխը)

Բոլորովին հեռու չէ։ Անտառի վեր-

ջում՝ մի եղէգնի ծառ կայ, որի կողքին, և գտնւում է տատիկի տնակը։

ԳԱՅԼ

Հապա ինչպէս պէտք է գնաս քո տատիկի մօտ։

ԿԱՐՄԻՐ ԳԼԽԱՐԿ

Կըթըխկթըխկացնեմ. խսկոյն կը բացանի դուռը։

ԳԱՅԼ

Չէ՞ որ նա չի կարող իր տեղից վեր կենալ, քանի որ հիւանդ է։

ԿԱՐՄԻՐ ԳԼԽԱՐԿ

Դէ որ չը կարողանայ վերկենալ. կարող է հարցնել. թէ ո՞վ է։ Իսկ ես կը պատասխանեմ՝ այդ ես եմ Կարմիր Գլխարկը։ Եւ նա ինձ կասի, թէ ինչ կերպով կարելի է բաց անել դուռը։

ԳԱՅԼ (Կիսաձայն հանդիսականներին)

Հարկաւոր է խսկոյն վազել տատիկի մօտ և նրան ուտել, լաւ է այս յիմար

աղջիկը ինձ սովորեցրեց իր տատիկի խրճիթը։

(Բարձրաձայն Կարմիր Գլխարկին, որ ուզում էր հեռանալ).

Ինչո՞ւ դու այլևս ծաղիկներ չես քաղում։ Կազմիր ծաղկէ փունջ և տար քո տատիկին որպէս ընծայ։ Նայիր հապա մէկ ինչպիսի գեղեցիկ ծաղիկներ են՝ կարմիր, աղաւնեգոյն, դեղնագոյն և այլն։

ԿԱՐՄԻՐ ԳԼԽԱՐԿ.

Ես այդ ծաղիկներով շատ եմ հետաքրքրւել։

ԳԱՅԼ

Հաւաքիր այդ բոլորը անուշիկս և մի ծաղկեփունջ կազմիր։

ԿԱՐՄԻՐ ԳԼԽԱՐԿ

Շատ ժամանակ է հարկաւոր քաղելու համար։ Վախենում եմ, որ ուշանամ։

ԳԱՅԼ

Ինչո՞ւ համար ես շտապում, խօմ ուսումնարան չե՞ս յաճախում։ Կարելի է և մի քիչ հանգստանայ։ Տես այստեղ, որ-

39678-63

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ ԳՐՊ

քան գեղեցիկ և շատ ծաղիկներ կան, եթէ ուզես մի բոպէում կաբող ես հաւաքել։ Ասում են, որ դու մեծ վարպետ ես ծաղկէփունջ կազմելու մէջ։

ԿԱՐՄԻՐ ԳԼԽԱՐԿ (Դէմքը դէպի հանդիսականները)

Որքան բարի է երևում, ինչպէս երևում է, գայլերից ըչերն են միմիայն վտանգաւոր։

(Մասը շրթունքներին մօտեցնելով ու մատծելով)

Հաւաքե՞մ այս ծաղիկները և տատիկի համար փունջ կազմեմ թէ՞

(Վեր է կենում, մօտենում է ծաղիկներին, և զամբիւղը դնում է գետնի վրայ և սկսում է ծաղիկներ հաւաքել)։

Որքա՞ն գեղեցիկ ծաղիկներ են, և ինչպէս անուշ հոտաւետ են։

ԳԱՅԼ

Այս լաւ է։ Սա իր համար արդէն զբաղմունք գտաւ. իսկ ես իսկոյն կվազեմ և կը գտնեմ նրա տատիկին (վազում է)։

ԿԱՐՄԻՐ ԳԼԽԱՐԿ (Հաւաքելով սպիտակ ծաղիկներ)

Որքան գեղեցիկ և սիրուն շուշաններ

կան... Որքան շատ հաւաքեմ, այնքան աւելի հոտ կարող է բուրել սենեակում։ Դաշտային մեխակը այնքան էլ հոտ չունի, միմիայն տեսքի համար լաւ է

(Գոկում է կարմիր ծաղիկներ)

Կոյտել պէտք է նաև բոժոժներ...

(Գոկում է դեղնագոյն ծաղիկներ)

Այժմ պարտենք մանուշակի. նրանք միշտ խոտերի մէջ թաց են կենում։

(Իբր թէ ցոյց է տալիս կանաչների մէջ մանուշակ է ման գալիս)

Ահա և մանուշակ։ Իսկ այժմ հարկաւոր է գեղեցիկ կանաչ խոտով շրջապատել չորս կողմը և ծաղկեփունջը արդէն պատրաստ կը լինի։

(Հաւաքում է կանաչները նստում գետնի վերայ և ծաղիկները մէկը մէկի վրայ դնելով զարդարում է ու հետաքրքիր նայում է կազմած ծաղկէփունջին)։

Ինչքա՞ն հրաշալի ծաղիկներ են, որքան կուրախանայ տատիկս։

ՎԵՐԵԳՈՑ

ԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Բեմը ներկայացնում է տատիկի սենեակը (Տատիկը պարկած է անկողնում մահճակալի վրայ, նրա վրայ քաշած է սաւան մինչեւ յատակ։ Ձեռները անկողնից դուրս է տարածած)։

ՏԱՏԻԿ

Օ՜խ որքա՜ն տկար եմ, բոլորովին ուժասպառել եմ, իմ բոլոր ոսկորներս ցաւում են, և միայնակ էլ պարկած եմ, գոնէ աղջիկս կամ թոռս գային տեսութեան։ (Դրսից թըխկթըխկոցի ձայն է գալիս)։

Ահա կարծես թէ մարդ կայ. երևի թէ նրանցից մէկն է։ Հարկաւոր է միմիայն ձայն տալ։ (Բարձրաձայն) Ո՞վ է.

ԳԱՅԼ (Դռան յետևից)

Ես եմ, Կարմիր Գլխարկը.

ՏԱՏԻԿ (ուշադրութիւնը լարելով)

Ա՜ռ ով է, չեմ լսում։

ԳԱՅԼ (Դռան յետևից բարձրաձայն)

Ես ձեր թոռն եմ, Կարմիր Գլխարկը, մայրիկիցս ընծայ եմ բերել։

ՏԱՏԻԿ

Օ՜ իմ թոռնիկս բարի՜ ես եկել։

ԳԱՅԼ

Բաց արէք դուռը, տատիկ ջան.

ՏԱՏԻԿ

Ես հիւանդ եմ սիրելի որդեակս չեմ կարող վեր կենալ։ Ձեռքդ մեկնիր թոկին, փականքը կը բարձրանայ դէպի վերև դուռը կը բացուի, դու ներս մտիր և դուռը ինքն իրեն յետևիցդ կը փակուի։

(Ներս է վազում գայլը, նրա յետևից դուռը ինքն իրեն փակւում է).

ՏԱՏԻԿ. (Տեսնելով որ գայլը բարձրանում է անկողնի վրայ, գոռում է)

Գա՜յլը, գա՜յլը, օգնեցէ՜ք

(Ուզում է փախչել, բայց վայր է ընկնում անշունչ)

ԳԱՅԼ. (Յարձակւելով նրա վրայ. յանկարծ կանգ է առնում)

Ոչի՜նչ, սա չի կարող այլևս իմ ձեռքից ազատուել, սրան կրծելը դժուար չէ, կարելի է և ուտել յետոյ, իսկ այժմ հարկաւոր է թոռին ճա՛կս քցեմ։

(Վերցնում է տատիկից գլխագիրը իրեն գլխին ծածկում ու տատիկին վայր է գլորում մահճակալի յետևը, պարկում է նրա տեղը և իրեն ծածկում է սաւանով (одѣяло) մինչև աչքերը)։

Ինչպէս երևում է լաւ եմ տեղաւորուել, նա ինձ սկզբից ի հարկէ չի ճանաչի, բայց երբ մօտենայ, վայրկենապէս կը բռնեմ նրան այնպէս, որ այլևս չի կարող նա ազատուի իմ թաթերի միջից։

(Դրսից լսւում է դռան ձայն)

Ահա և նա, տեսնում ես որքան ճարպիկ է, իսկոյն հասաւ (բարձը) ո՞վ է...

ԿԱՐՄԻՐ ԳԼԽԱՐԿ (Դռան յետևից)

Տատիկ ջան բաց արէք դուռը, այդ ես եմ, ձեր Կարմիր Գլխարկը։ Եկել եմ ձեզ տեսակցութեան և բերել եմ ընծայ մայրիկից՝ կարկանդակ, կարագ և մի շիշ էլ գինի։

ԳԱՅԼ

Ես տկար եմ բալիկս, և տեղից չեմ կարող վեր կենալ։ Բռնիր թոկը փականքը կբարձրանայ վերև, դուռը կը

բացուի և քո յետևից ինքն իրեն նորից կը փակուի։

ԿԱՐՄԻՐ ԳԼԽԱՐԿ (Ներս է մտնում, և դուռը նրա յետևից պինդ փակւում է, մի քանի քայլ առանելուց յետոյ, Կարմիր Գլխարկը կանգ է առնում տարակուսած)

Տատիկ, ա՛յ տատիկ, ինչո՞ւ համար դուռ ոտից մինչև գլուխ սաւանով փաթաթուել էք։

ԳԱՅԼ

Մրսում եմ, որդիս ցուրտ է։

ԿԱՐՄԻՐ ԳԼԽԱՐԿ (Առաջ գալով մի քայլ ևս)

Տատիկ ա՛յ տատիկ. էս ի՞նչ բան է, ձեր գլխագիրի տակից երկու մեծ և սուր ականջներ են ցցած։

ԳԱՅԼ

Որպէս զի լաւ լսեմ սիրելիս, որպէս զի լաւ լսեմ հոգեակս։

ԿԱՐՄԻՐ ԳԼԽԱՐԿ (Մի քայլ ևս առաջ գալով)

Տատիկ ջան տատիկ. ինչո՞ւ ձեր աչքերը վառւում են կրակի նման.

ԳԱՅԼ

Որպէսզի քեզ լաւ տեսնեմ թոռնիկս, որպէս զի քեզ լաւ տեսնեմ ջանիկս։

(Բարձրացնելով թաթը ուզում է բռնել Կարմիր Գլխարկին)

ԿԱՐՄԻՐ ԳԼԽԱՐԿ

Տատիկ ջան տատիկ. ինչո՞ւ ձեր ձեռները երկարել ու բաւականին բըրդոտ են։

ԳԱՅԼ

Ուզում եմ գրկել քեզ որդեակս

(աշխատում է քաշել նրա հանգուստից, սաւանը վայր է ընկնում)

ԿԱՐՄԻՐ ԳԼԽԱՐԿ (գոռում է)

Ա՜հ գա՜յլը գա՜յլը, օգնեցէ՛ք, ի սէր Աստծոյ օգնեցէ՛ք։

(վազում է դռան մօտ. գայլը բռնում է նրա շրջազգեստից, թռչում է մահճակալից և հետևում է նրան երեք թաթով, չորորդով բռնած հագուստը)։

ԿԱՐՄԻՐ ԳԼԽԱՐԿ

(բռնելով դուռը, բաց է անում և գոռում)

Ազատեցէ՛ք.

(Ներս է մտնում որսորդը, խփում է կացինով գայլին, որը վայր է ընկնում գետնին)։

ՈՐՍՈՐԴ

Այդ ի՞նչպէս գայլը այստեղ ներս մտաւ։

ԿԱՐՄԻՐ ԳԼԽԱՐԿ

Ես բոլորովին չգիտեմ։ Ներս եմ մըտ-

նում տատիկիս մօտ, տեսնում եմ, որ նա պարկած է տատիկի տեղը և գլխին դրած է նրա գլխադիրը։

ՈՐՍՈՐԴ

Օ՜հ նա լափել է երևի խեղճ պառաւին։

ՏԱՏԻԿ (Մահճակալի յետևից)։

Ախ՜, օգնեցէք, ի սէր Աստուծոյ, ա՜հ արդէն իմ մահը հասել է։

ՈՐՍՈՐԴ (նայելով մահճակալի յետևը)

Տատիկը կենդանի է, բայց ընկած է գետնի վրայ. խեղճ կին ես նրան կօգնեմ և կբարձրացնեմ։ Իսկ դու առայժմ հանիր գլխադիրը գայլի գլխից, մի՛ վախենար նա արդէն սատկել է, այլևս չի կրծի

ԿԱՐՄԻՐ ԳԼԽԱՐԿ

Նոյնիսկ հանելն էլ հարկաւոր չէ, քանի, որ ինքն արդէն վայր ընկել։

(Դնում է զամբիւղը սեղանի վրայ, բարձրացնում է յատակի վրայից գլխադիրը և մօտենում տատիկին),

ՈՐՍՈՐԴ

Խօմ չե՞ս ջարդուել պառաւիկ.

ՏԱՏԻԿ

Ինչ ժամանակ է մտածել ջարդելու մասին։ Փառք Աստուծոյ, որ այսքան էլ սաղ ենք մնացել, լաւ էր որ չը կերաւ ինձ։

ՈՐՍՈՐԴ

Ախար չեմ հասկանում, դա ինչպէս պատահեց, որ ներս ընկաւ այստեղ.

ՏԱՏԻԿ

Խորամանկութեամբ սիրելիս։ Զատ խաբեբան է նա։ Պարկած եմ ես և լսում եմ յանկարծ դուռը ծեծում են։ Ձայն եմ տալիս. պատասխանում են՝ «Այդ ես եմ, Կարմիր Գլխարկը, ձեր թոռը»։ Լսում եմ, բայց ձայնը անծանօթ է։ Խուլ եմ,—մտածում եմ ես—լաւ չեմ լսում, դրա համար էլ սովորեցրի դուռ բաց անելու ձեր։

ԿԱՐՄԻՐ ԳԼԽԱՐԿ (փաթաթւում է տատիկի վզովը)

Տատիկ, ջան տատիկ, ներեցէք ինձ։ Այդ ես եմ մեղաւորը, որ գայլը այստեղ է եկել, ես եմ ճանապարհին նրան ասել այդ բանը, նոր եմ յիշում։ Անցնում

էի անտառով, բերում էի կարկանդակ, մի ման կարագ ու մի շիշ էլ գինի։ Հետաքրքրւեցի ծաղիկներով, մէկ էլ տեսնեմ հէնց կողքիս կանգնած է գայլը։ —Բարև քեզ Կարմիր Գլխարկ,—ասում է նա և այն էլ քաղցրալիր։ Խօսք խօսքի վրայ է գալիս ես էլ պատմում եմ, թէ ինչպէս կարելի է գտնել ձեր խրճիթը և ինչ կերպով կարելի է ներս մտնել ձեզ մօտ.

ՏԱՏԻԿ (Գլուխը շարժելով)

Ախ դու իմ անմիտ երեխայ։ Հմ՛ թէ ընկեր ես գտել ժամանակ անցկացնելու համ։

ԿԱՐՄԻՐ ԳԼԽԱՐԿ

Տատիկ ջան ես մեղաւոր եմ. Նոյնիսկ մայրիկն ինձ նախազգուշացրեց էլ, որ ես անծանօթներից և ոչ մէկի հետ չխօսեմ։ Բայց գայլը այնքան ընքոյշ և քաղցր էր խօսում՝ քաղիր ծաղիկներ տատիկի համար-ասում է—ես լսել եմ, որ դու մեծ վարպետ ես ծաղկէփունջ կազմելու մէջ։

ՏԱՏԻԿ

Մ՛խ նա շատ խարեբան է։ Ուղիղ են ասել, ով որ խաբում է, նա և թշնամի է։ Քիչ մնաց թէ բամբասութիւն բերէիր մեզ վրայ որդեակս, նա քիչ մնաց, որ ուտէր, ինձ։

ՈՐՍՈՐԴ

Նորից հին բաներն մտաբերելն աւելորդ է։ Յառաջ թողնիկս, սրանից յետոյ զգոյշ կլինիս։ Ապա խմենք գինին ուրախանանք և ուտենք բերած կարկանդակը կարագով։

ՏԱՏԻԿ

Եւ իսկապէս։ Մինչև հիմա ես ձեզ դեռ չեմ պատուել

(Վեր է կենում մահճակալից, մօտենում է սեղանին. հանում է զամբիւղի միջից ինչ որ դրուած է, լցնում է գինով բաժակը ու տալիս որսորդին)

Ահա սիրելիս, խմիր կեր և անուշ արա։

ՈՐՍՈՐԴ

Տատիկ, ձեր կենացը։

ՎԵՐԵԳՈՒՑՐ

ՉՈՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Բեմը ներկայացնում է դարձեալ Կարմիր Գլխարկի մօր սենեակը։

(Մայրը նստած կարում է իր հագուստը, իսկ նրա կողքին պարկած է շունը)

ՄԱՅՐԸ

Երկար ժամանակ է, որ չի երևում Կարմիր Գլխարկը։ Չլինի թէ կորցրել է ճանապարհը։

(Յառում է ուշադրութիւնը)

Այս ինչ բան է։ Ես քայլերի ձայն եմ լսում։

(Բեմի յետևից լսում է մի զոյգ քայլի դրոփիւնը)։

Ահա վերջապէս և Կարմիր Գլխարկը, բայց նրա հետ կարծես մի ուրիշ մարդ էլ կայ։

(Բաց է անում դուռը) Ներս է մտնում որսորդը Կարմիր Գլխարկի հետ միասին։ Վերջինը գրկախառնում է իր մօրը։

ԿԱՐՄԻՐ ԳԼԽԱՐԿ

Մայրիկ, սիրելի մայրիկ. քիչ մնաց որ ինձ հետ դժբախտություն պատահեր.

ՄԱՅՐԸ (Ուրուրդին).

Ի՞նչ է պատահել. որտեղ դուք սորան հանդիպեցիք, ասացէք խնդրեմ: Ի՞նչ լուր ունիք տատիկից: Նստեցէք խնդրեմ և պատմեցէք թէ ինչո՞ւմն է բանը:

ՈՐՍՈՐԴ (Աթոռի վերայ նստելով)

Ոչինչ, փառք Աստուծոյ. բոլորն էլ յաջողակ անցաւ: Գայլը ճանապարհին հանդիպում է Կարմիր Գլխարկին, խափում է սորան և խորամանկութեամբ իմանում տատիկի խրճիթը. մտնելով նորա տնակը, վայր է գցում խեղճ պառաւին մահճակալի վրայից և նստում է տատիկի տեղը: Իսկ երբ Կարմիր Գլխարկը ներս է մտել, գայլը յարձակուել է սորա վրայ և ուզեցել է ուտել, բայց լսելով սորա աղաղակը, ես ներս վազեցի և իսկոյն կացինով սատկացրի նրան:

Տատիկը սաստիկ վախեցել է և գայլը կարծել է թէ յա մեռած է արդէն դրա համար էլ նորան թողել է և չի կերել: Իսկ այժմ տատիկը շատ հանգիստ է և առողջութիւնն էլ նոյնպէս շատ լաւ է:

ԿԱՐՄԻՐ ԳԼԽԱՐԿ

Այո մայրիկ նա այժմ շատ հանգիստ է:

ՄԱՅՐԸ

Աստուած իմ. կարող էր ախար մի մեծ դժբախտութիւն պատահել, եթէ դուք պատահաբար չանցնէիք տատիկի խրճթի մօտով.

(Գրկում է Կարմիր Գլխարկին և համբոյրներ գրոշմում)

Իսկ դու իմ փոքրիկս շատ ես վախեցել հա՞: Լաւ է, որ նա քեզ անտառում չը յոշոտեց և յափշտակեց: Այս քեզ խրատ, միւս անգամ եղիր զգոյշ, ուշադիր և մի դուրս տայ քեզանից այն, ինչ որ չի պահանջում: Չէ՞ որ դու ես իմ միակ ուրախութիւնս, երջանկութիւնս. (ուղղում է ժապաւէնի կապը) և իմ սիրելիս:

ՈՐՍՈՐԴ (Ժպտալով նայում է Կարմիր Գլխարկին)

Այո իսկապէս, որ դա շատ քաղցրիկ աղջիկ է ձեզ համար։ Պիտի խոստովանել, որ այս զէպքը մի լաւ դաս է նորա համար։ Նա այլևս հեշտութեամբ չի ընկնի թակարդ և այլևս չի խօսի գայլի հետ։

ՄԱՅՐԸ

Իսկ այժմ եկէք սիրելիք բոլորս միասին նստենք ճաշելու։ Ճաշը պատրաստ է, կարող է և սառել։

ՎԵՐԵԳՈՑՐ

ՊԵՏԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-ում ՍՍՀ
Ա. անվ. Մեսրոպյանի անվան

12387

Арм.
3-3525ə

ՏՊԱԳԻՐՈՒԹԵՒՆ ՀԱՄԱՐ ՊԱՏՐԱՍՏ ԵՆ՝

I

ՄԱՆԿԱԿԱՆ

ա Էրմօնկ. Երկաթուղին վառնգից ազատող ազդիկը

II

ԴՊԻՐ ԵՒ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Ուսց. Երկիր, 27 Նկարով

III

Երգարան. Ժողովածու հայերէն բնաբեր երգերի.

ԳԻՆՆ Է 15 Կ.

Դիմել՝ Թիֆլիս «Կենդրոնական» և միւս գրավաճառանոցներին։

«Ազգային գրադարան»
NL0402783

13474